ՔԱՂՎԱԾՔ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

06.11.2023 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ Ա Ն

2023 թվականի նոյեմբերի 6-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանը, Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Ալեքսանյանը, Արամայիս Փաշինյանը, Նարեկ Համբարձումյանը և Մարիամ Գալստյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստը իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի հինգ անդամ:

Օրակարգում ներառված էր Հայկուհի Հարությունյանի և նրա ընտանիքի անդամների՝ հայտարարագրերի վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հարցը, մասնավորապես՝

1. Հայկուհի Հարությունյանի 2019 թվականի տարեկան հայտարարագրի տարեսկզբի դրությամբ հայտարարագրել է 18,891,731 ՀՀ դրամ ավանդի և 2,604,478 ՀՀ դրամ դրամական միջոցների (որից 1,250,000 ՀՀ դրամը՝ կանխիկ) վերաբերյալ տվյալներ: Դրամական միջոցների ծագման աղբյուրի վերաբերյալ Հայկուհի Հարությունյանի կողմից ներկայացված պարզաբանման համաձայն՝ դրանք հանդիսացել են տարիների ընթացքում իրականացված մասնագիտական աշխատանքների արդյունքում ստացված եկամուտների հաշվին կատարված խնայողությունները: Որպես հավաստում Հայկուհի Հարությունյանը Հանձնաժողովին է ներկայացրել «Օնլայն բանկինգ» հավելվածից արված լուսապատճենը, համաձայն որի բանկային հաշվի մնացորդները կազմել են 31,444,095 ՀՀ դրամ, իսկ ավանդները՝ 7,484,094 ՀՀ դրամ: Հարկ է նշել, որ Թեկնածուի կողմից ներկայացված՝ բանկային

հաշիվների մնացորդների և բանկային ավանդների վերաբերյալ տեղեկությունները հաստատվել են նաև Կենտրոնական բանկից ստացված տվյալներով:

ՊԵԿ-ից ստացված տվյալների համաձայն՝ Հայկուհի Հարությունյանի 2013-2019 թվականների օրինական եկամուտները կազմել են ընդհանուր մոտավորապես 33,000,000 ՀՀ դրամ: Բացի այդ, Հայկուհի Հարությունյանը Հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից ստացած այլ եկամուտների վերաբերյալ հիմնավորող փաստաթղթեր, որոնց համաձայն՝ վերը նշված ժամանակահատվածում Հայկուհի Հարությունյանը քաղաքացիաիրավական պայմանագրերից ստացել է ընդհանուր՝ 17,000 Եվրո, 5,000 ԱՄՆ դոլար, 3,000,000 ՀՀ դրամ եկամուտ:

2. Հայկուհի Հարությունյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ «Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում, հայտարարագրել է [redacted]-ում տարեվերջին առկա 1,693,114 ՀՀ դրամ, 2022 թվականի տարեկան հայտարարագրում՝ տարեսկզբին՝ 2,155,080 ՀՀ դրամ, 15,182 ԱՄՆ դոլար և 4,462 եվրո, տարեվերջին՝ 3,155,254 ՀՀ դրամ, 18,055 ԱՄՆ դոլար և 5809 եվրո: Հայկուհի Հարությունյանի՝ [redacted]-ի բանկային հաշիվների քաղվածքների համաձայն՝ 31.12.2021 թվականի և 01.01.2022 թվականի դրությամբ վերջինիս հաշիվներին առկա դրամական միջոցների մնացորդները կազմել են համապատասխանաբար 1,610,467 ՀՀ դրամ, 15.184 ԱՄՆ դոլար և 4465 եվրո, 31.12.2022 թվականի դրությամբ՝ 2,660,975 ՀՀ դրամ, 18,055 ԱՄՆ դոլար և 5908 եվրո: Առկա է անհամապատասխանություն 2021 թվականի տարեկան հայտարարագրում հայտարարագրված տվյալների և [redacted]-ի քաղվածքներով տրամադրված տվյալների միջև՝ 2021 թվականի տարեվերջին՝ 82,647 ՀՀ դրամի, 15.184 ԱՄՆ դոլարի և 4465 եվրոյի չափով, 2022 թվականի տարեսկզբին՝ 544,613 ՀՀ դրամի չափով, 2022 թվականի տարեվերջին՝ 494,279 ՀՀ դրամի չափով:

Հայկուհի Հարությունյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ «Բ.4.3. Բանկային ավանդներ» բաժնում, տարեվերջին հայտարարագրել է 0 ՀՀ դրամ, 2022 թվականի տարեկան հայտարարագրի տարեսկզբին՝ 6,937,938 ՀՀ դրամ:

Հայկուհի Հարությունյանի՝ [redacted]ի ավանդային հաշվի քաղվածքների համաձայն՝ վերջինիս անունով [redacted]ում առկա ավանդների մնացորդները 31.12.2021 թվականի և 01.01.2022 թվականի դրությամբ կազմել են 6,938,209 ՀՀ դրամ: Առկա է անհամապատասխանություն 2021 թվականի տարեկան հայտարարագրում տարեվերջին հայտարարագրված ավանդների մնացորդների և [redacted]ի ավանդային հաշվի քաղվածքներով տրամադրված տվյալների միջև՝ 6,938,209 ՀՀ դրամի չափով:

Հայկուհի Հարությունյանը 2021 թվականի տարեկան հայտարարագրում՝ «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում, [redacted]-ում տարեվերջին առկա դրամական միջոցներ չի հայտարարագրել, սակայն 2022 թվականի տարեկան հայտարարագրի «Բ.6.1. Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» բաժնում հայտարարագրել է տարեսկզբին առկա 1,494,844.8 ՀՀ դրամ և 32 ԱՄՆ դոլար դրամական միջոցներ:

Կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների համաձայն՝ 31.12.2021 թվականի դրությամբ Հայկուհի Հարությունյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են՝ 1,494,844.8 ՀՀ դրամ և 15,474.9 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար (32 ԱՄՆ դոլար):

Առկա է անհամապատասխանություն 2021 թվականի տարեկան հայտարարագրում տարեվերջին հայտարարագրված դրամական միջոցների մնացորդների և Կենտրոնական բանկից ստացված տեղեկությունների միջև:

Արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Հայկուհի Հարությունյանը ներկայացրել է պարզաբանումներ և փաստաթղթեր, այդ թվում ներկայացված բանկային հաշիվների քաղվածքները և նախկին աշխատանքային գործունեությունից ստացված եկամուտներն հավաստող պայմանագրեր:

3. Հայտարարագրերի վերլուծության ընթացքում ներկայացվել են նաև Հայկուհի Հարությունյանի ընտանիքի անդամների՝ Հայկ Հարությունյանի և Լույսանուշ Հարությունյանի 2020 թվականի տարեկան հայտարարագրերը թղթային տարբերակով:

Ներկայացված պարզաբանումների և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը Հայկուհի Հարությունյանի ընտանիքի անդամների հայտարարագրերում որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերել:

Քննարկելով վերը նշված հարցերը, ինչպես նաև Հայկուհի Հարությունյանի կողմից ներկայացված պարզաբանումները և փաստաթղթերը՝ Հանձնաժողովը Հայկուհի Հարությունյանի գույքային դրության օրինականության և հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության վերաբերյալ խնդիր չի արձանագրել՝ հաշվի առնելով, որ առկա դրամական միջոցները հիմնավորվում են ստացված օրինական եկամուտներով: